

ՊԱՆԿԵՆ ԿԻՋՈՑ ՏԵ ՎԻՐ, դուստր Կիդդի, տիկին Կոռնելիոս ՏԵ ՎԻԳԻ, անուանի ՀԵԿԻՆԱԿ պատմութեանց տղայոց համար, և Թարգմանիչ տեղդիերէնէ:

ԳՈՒՐԵԼՄՈՍ ԳԱՌԵԼՄԱՆ, զերմանացի համբաւոր պատկերահան:

Հ. Գ. ԼԻՍՏՈՒ, անուանի երգահան և ուղղիչ երաժշտական խմբից:

ՄԻՔԱՅԵԼ ՄԱՔՍԻՄՈՎԻՉ, ռուս բուսաբան: ԼՈՒԴ. ՓՐԱՆԿ. ՄԵՏՆԻԷ, գաղղիացի նշանաւոր լեզուագէտ:

ԱԻԳՈՏ. ԷՄ. ՌԱՅՍ, աստորիացի հանքաբան:

ՍԻՄԵՈՆ, գաղղիացի վաղեմի սինկդիտոս, Թարգմանիչ Որատիոսի:

ԿԱՐՈՒՍ ՍԵՐՆԵՐ, մեծահոշակ իրաւաբան 'ի Պոսդոն Ամերիկոյ:

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԹՈՄՍԱՅԵՆՑ, իտալացի-տալմաք մեծարելի մատենագիր, իմաստասէր և գաստիարակ:

ՅՈՂՈՒՓ ՊԱՆԶԱՐԵԿԻՆ, իլիանցի արգիւնաւոր շիտածապետ:

ՊԻՐԱՅԻ, գաղղիացի գրագէտ և միապետական երեսփոխան 'ի Ժողովն ազգային: ՓԱՅՏՈՑ ԶԵՐԻ, բիեմոնդեցի երիտասարդ հնչկագէտ, աշակերտ Պրորհաւորի:

ԴՈՄԵՆԻԿՈ ՉԻՐՈԼԵԿԻ, հոռմայեցի երիտասարդ չափաբեր, բազմագէտ աստեղաբաշխ գիտարանին Փլորենտիոյ:

ՓԱՅՆԿԱՅՈՍ ԳՈՒԼԴԻՆ, փլորենտացի նշանաւոր կատակերգիկ մատենագիր և զաւեշտարար՝ տղայոց համար:

ՀԱՍԵՆ, գերմանացի նշանաւոր աստեղաբաշխ:

ԼՈՒԿ. ՄԻՇԵԼ, գաղղիացի գաստիարակ: ՓԻԼԻՍ, գաստու կենդանաբանութեան յՈՐԱՓՈՐԴ:

ՌԱՅԵՏԵԱՆ մարդիկ, գաղղիացի երգահան:

ՓՐԱՆԿԱՅՈՍ ԴԻՐԵԿԵԱՆ, նէապոլեցի անուանի տնտեսաբան, ուղղիչ Թանգարանաց Նէապոլի:

ՎԻԼԿԵՆՅԱՅՏԵԱՆ, գաղղիացի խմբագրիչ (րապրիկ Դատարանաց (Gazette des Tribunaux):

ԶԱՆԱԶԱՆ ԳԻՏԵԼԻՐ

Պաղէկի փախուստը. — Պաղէն մարաշախտիկ Ս. Մարգարիտէ կղզիէն փախչիլն բոլոր զաշխարհ տալեցուց. և յիրաւի զարմանաց արժանի է նորա արիւթիւնը, իր տիկին ամուսնոյն խորամանկութիւնը, և վերջուպէս ձեռնարկութեան անարգել յաջողութիւնը:

Կը յիշեն անուշտ ընթերցողք որ Դրիսանոնի պատերազմական ժողովոյն Պաղէնի դէմ մահուան դատակնիք տալէն ետքը, Մար- Մահոն մարաշախտը ըստ խնդրոյ դատաւորաց ժողովոյն, փոխեց պատիժը 20 տարուան բանտարգելութեան. և քիչ օր ետքը, այսինքն 'ի վերջ կոչոյ 1875 ամին զեկտեմբեր ամսոյն, դատապարտեալը Մար-գարիտէ կղզին տարուեցաւ: Բայց միշտ նաւոր չնորհիւ՝ բանտարգելոյն անտանելի կեանքը զիրացնելու համար՝ մէկ քանի թոյլտուութիւնք եղեր էին. բերդին մէջ սակաւաթիւ խումբ մը կար 'ի պահպանութիւն՝ Պ. Մարքիի առաջնորդութեան տակ, ծննդեանք գորսիգային, որ արդէն շատ անգամ առաջնորդութիւն ըրած էր բանտարգելութեանց: Պ. Վիլլէզ գնդապետն որ ամբողջ դատաստանին ժամանակ անբաժան մնացեր էր Պաղէնի քով, թողուցին որ հետք երթայ 'ի Մարգարիտէ, տանելով միտտեղ որդիքը և ամուսինը, որոց սէրն առ Պաղէն երբէք չի չիջաւ դատաստանին սկիզբէն մինչև բանտարգելութիւնը:

Բանի որ եղանակն ձեռնային էր, բանտարգելութեան կենաց դժուարութիւնք շատ չէր զգար Պաղէն, բայց երբ ամուսնային տարը կոխեց, ալ անկէ ետքը անտանելի էր Մարգարիտէ կղզոյն բնակութիւնը: Մարաշախտն չրջագայելու համար ուրիշ տեղ չունէր, եթէ ոչ փոքրիկ հովանոց մը, բոլոր օրը արեգական բոցատոջոր ճառագայթից տակ, Բերդէն գուրս և ոչ քայլափոխ սեղ կրնար հեռանալ. անոր համար հարկեցաւ արձակել ընտանիքը այդ վատտառոյշ տեղէն, գոհ ըլլալով առանձին մնալ Վիլլէզ գնդապետին հետ: Յուլիս ամսոյն մէջ Պաղէն տիկինը, իր ազգականին Պաղէն ճարտարագետին հետ Մար-Մահոնի Հատարակապետութեան նշանազանին գնացին, որպէս զի խնդրեն իրմէ մեղմանցնելու բանտարգելոյն խեղճ վիճակը. և առաջարկեցին որ փոխանակ

բանտի՝ արքայ դրկուի: Բայց Մաք-Մահոն հաւանութիւն չի ցուցուց:

Ասոր վրայ քանի մ'որ կ'անցնի, և ահա բանտարկեալը կը ժողովէ կահկարասիքը կապող չուանները, և կը քակէ զանոնք մի առ մի ձեռքովը, և կը միայնէ նորէն երկայն մալուս մը ձևացնելով: Եւ ապա այս մալուսը կ'անցընէ պատին միջէն ջրոց թափուելով բացուած պատառուածքէն և անկէջ կախուած վար կ'իջնայ, առանց վախնայու երեսուն մեղր բարձրութիւնէ մինչև ծովափը ցցուած ժայռից զարնուելէ: Յանդուգն էր գործը, որուն ձեռնարկելու համար մարաշախտին անվախ արիւթիւնն կարևոր էր: Այ միայն չուանն կրնար կրտսրի, քաղուի կամ ելլալ հաստատուած տեղէն, այլ և պահապաններէն մէկը՝ թէ և գիշեր ատեն, կրնար տեսնալ փախստականը ու հարուածել: Ասկէց կ'երեւայ որ բերդին զիրքն ալ գիւրացուցած ըլլայ փախուստը. այն կողմն ուսկից իջեր է մարաշախտն՝ ամենեւին պահապան եղած պիտի չըլլայ:

Գալով հիմա փախստականին, տակաւին չենք գիտեր իր նպատակը. բայց զանազան օրագրաց տուած տեղեկութեանց նայելով, Սպանիա պիտի երթայ եղբւր: Մարաշախտին փախուստը զլիսադատպէս Պազէն տեղեւոյ զործ է, վասն զի այս պարագայիս ինչպէս նաև ուրիշ դժուարին առթից մէջ յորս գտնուեցաւ իր ամուսինը, մեծ յաջողամտութեան ու արիւթեան ցոյց տուաւ: Ահա և իր նրատարակեալ հօս այս տեղեւոյ մէկ նամակն ալ, ուղղեալ առ ներքին գործոց պաշտօնեայ Գաղղիոյ, որ կը պարզէ իր ամուսնոյն փախստեան պատմութիւնը.

« Մթա, 16 օգոստոս 1874

« ՊԱՐՈՆ ՊԱՇՏՈՆԵԱՅ

« Հօս հասնելով կարգացի օրագրաց մէջ որ մարաշախտին փախստեան պատճառաւ զանազան կալանաւորութիւնք տեղի ունեցեր են: Արդէն միտք ունէի գրել քեզի այս նիւթիս վրայ, և այսօր պարտք կը համարիմ զայն ինծի:

« Մի փնտռէք գործակից՝ վասն զի չկայ: Եւ և իմ ազգականս Ալվարէզ տը Ռուլ երկուքնիս ամենայն ինչ յարմարցուցինք: Երբ տեսայ որ բանտարկեալ մարաշախտին կենաց վրայ փոփոխութիւն պիտի չըլլայ, և վախ կար մանաւանդ որ կեանքն կարճնայ, որունցի համոզել զինքն 'ի փա-

խուստ: Այդ բանին համար աղաչեցի զԱլվարէզ, որուն ազատ վիճակը կը ներէր օգնել ինծի. և փոփոխակի խօսք տուինք իրարու մենք մեզէն կատարել զամենայն, զուրիշները 'ի վտանգ չընելու համար:

« Եւ ահա կը հաղորդեմ քեզի եղածին վրայ մանրամասն տեղեկութիւն, յուսալով որ արդարութիւնն իմացուի, և չըլլայ թէ անպարտ ու անմեղ անձինք հեծեն 'ի բանտի: Թողուցի զԱլբա յուլիսի 29ին, առնելով հետս զԱլվարէզ, Գնացինք 'ի Ճենովա, ուր կրցանք 'ի վարձու առնուլ Բէի. բանոյ-Տանովարոյ ընկերութենէն նաւ մը, պատճառանք արշաւանք մ'ընելու Միջերկրականի մէջ, պայմանաւ որ նաւն բողոքովն մեր կարգադրութեան տակ ըլլայ:

« Շաբաթ օրը, 8 օգոստոս, առաւօտեան ժամը երեքին ելանք Ճենովայի նաւահանգիստէն, և հասանք յառաջ քան զմիջօրէն 'ի Բորդոյ-Մալրիցիոյ, ուր օգոյն գէշու թիւը ստիպեց զմեզ գիշերօթել: Նրկորդ առաւօտուն, օգոստոս 9, յառաջեցինք դէպ 'ի Ս. Ռէմոյ, և հօս անցուցինք օրերնիս:

« Ժամը 5ին հրաման տուինք նաւապետին, ուղղել նաւը դէպ 'ի Ժուան ծովածոցը, որովհետև կ'ուզէինք, ինչպէս ըսինք իրեն, ծառայ մ'առնուլ ծովափնեայ մէկ գեղէն. նաւապետն ամենեւին տեղեւոյ չէր մեր խորհրդոցը: Մարաշախտն գիտէր առաջուց նամակիս խօսքերէն, գործ գրեցի ծածուկ քանաքով (encres sympathique), որ անմիջապէս 'ի հասանել նաւու միոյ 'ի ծովածոցն Ժուան, ահապարէ ու կզգիէն վար իջնայ զիշեր ատեն:

« Նաւապետն հարցուց մեզի թէ ո՞ր և ո՞ր ժամուն կ'ուզենք մեկնիլ: Պատասխանեցինք. Մօտակայ գեղ մը կ'երթանք ծառայ մ'առնելու, և թերևս աղախին մ'ալ, և ապա կէս գիշերուն ետ կը դառնանք 'ի Նիցցա: Ժամը եօթնին թողուցինք նաւը, և ցամաք ձգել տուինք զմեզ մօտ 'ի Քրուսգէզ, վտանգի մէջ չի ձգելու և ոչ նաւաստիքը: Եւ անկէց ոտքով Քրուսգէզ դացինք, ուր նաւակ մը վարձեցինք շրջագալութիւն մ'ընելու ծովուն վրայ: Եւ որովհետև ծովը սաստիկ յուզեալ էր, և մենք հազիւ զիտէինք թիավարել, անոր համար հասանք բերդին ստորոտը, որ է հանգըս Ժուանի, գրեթէ ժամը 10ին: Եւ ահա տե-

սանք որ մարաջախտը վար կ'իջնար երկայն շուանով, և նշանով մը նաւակին գտնուած տեղը իմացնելու համար լուցափայտ մը վառեցինք: Մարաջախտը շուտով պատասխանեց մեզի վառելով ինքն ալ լուցափայտ մը, իմացնելու մեզի հասած տեղը: Եւ ահա քիչ ետքը ծով ցատկեց նաւակին հասնելու համար: Ալվարէզ օգնեց իրեն վեր ելլելու, վան զի մարաջախտն ուժաթափ եղեր էր:

« Այն ատեն երեքնիս միատեղ ջանացինք հասնիլ նախին, որ պիտի սպասէր մեզի այն տեղը ուր թողուցինք զինքը: Հասանք վերջապէս մեծամեծ արգելներէ անցնելէ ետքը և ներս մտանք, և նաւաստեաց մէկուն ձեռքով դարձեալ նաւակը ծովափը տանել տուինք:

« Եւ ապա ժամը գիշերուան մէկին հրաման տուինք նաւապետին խարխիսն 'ի վեր առնուլ և դիմել դէպ 'ի ձննովա, ուր հասանք օգոստոսի 10ին:

« Այս է, տէր, ճշմարտութիւնը, և պատիւ ունիմ որդունեկ զքեզ

« ՄԱՐԱՋԱՅՈՒՆԻ ՊԱՋԵՆ.

Այլ ոմանք չհաւատարմով այս պատմութեան՝ ուրիշ կերպ կը պատմեն Պաղէնի փախուստը, իբր թէ մարաջախտն ծայրէն վար իջած չըլլայ, այլ բաց դռնէ մը դուրս ելած, որուն ստուգութիւնը կ'իմանանք երբ առանձին դատաստանական քննութեան առնուի գործը:

Ֆորմոզա կղզոյն խնդիրը. — Վախ կայ քաղաքագիտական աշխարհին մէջ, թէ կոխ մը ծնանի Ձինու ու Ճաբոնի մէջ Ֆորմոզա կղզւոյն պատճառաւ: Այս կղզին որ կ'ընկնայ Ձինաստանի հարաւային-արեւելեան կողմը, մէկ մասը նոյն կայսերութեան կը վերաբերի, և միւս մասն ալ անկախ է, բնակիչաւ 'ի տեղացի վայրենեաց: Ձինաստան, ինչպէս կ'երեւայ, կը պահանջէ որ իշխանութեան իրաւունք ունենայ բոլոր կղզւոյն վրայ, իրաւունք՝ որով ըստ չինական գաղափարաց՝ կրնան 'ի բաց հանել կամ շնորհունի գոտարս: Անցալ տարի դաշնագրութիւն մը կնքուեցաւ Ձինու ու Ճաբոնի մէջ, որոյ գորութեամբ թոյլ կը տրուէր Ճաբոնի տերութեան հպատակաց՝ հաստատուիլ չինական հողոյն վրայ. բայց

Բէքինի Տէրութիւնը կը պնդէ թէ նոյն դաշնագրութեան մէջ յիշատակութիւն չը կայ Ֆորմոզայի այն մասին վրայ ուր տեղացիք կը բնակին. և թէ 'ի հակասութեան է գործը Մյեյքիմայի ըսածին հետ, որ էր դեսպան Ճաբոնի 'ի Բէքին և ստորագրող նոյն դաշնագրութեան:

Բայց վերջապէս հաստատուեցան Ճաբոնք մեծաւ մասամբ տեղացեաց ընական կողմերը, նաւական զօրութիւններ զրկելու կղզւոյն մէկ քանի եղբերները, և ասկէց զատ Հարցուցին Ֆու-Քեանի կառավարչին (չինական քաղաք ուսկից կը կախուի Ֆորմոզա կղզին), հանել 'ի ցամաք զօրաց գնդեր գինուորական հրահանգութիւններ ընելու համար: Այս բանս որ տեսաւ, սկսաւ կասկածիլ Ձինաց տէրութիւնը և երկբայիլ մտքերնուն վրայ, ինչպէս յայտնի է Բէքինէն զրկուած չրջաբերական թղթէն Ֆորմոզայի մօտ եղած գաւառաց կառավարչաց. որուն պատճէնը այս է:

« Տէրութիւնը մայիսի 11ին յուշարար գիր մ'ընդունեցաւ որ կ'իմացնէր թէ քանի մը Ճաբոն նաւեր խարխիս նետած ըլլան յԱնոյ, և հրաւիրած գնդին ինքը տէրութիւնը յանձնել մէկ քանի բարձրաստիճան սպայից քննել զՃաբոնացիս:

« Երբ անցեալ տարի Ճաբոնացի դեսպանք Բէքին եկան դաշնագրութիւնը կնքելու համար, ամենեւին խօսք չեղաւ Ֆորմոզայի տեղաբնակաց վրայ: Եւ հիմա Ճաբոն յանախակայս պատգամաւորութիւն կողորդէ 'ի Ֆու-Քեան, և կը խնդրէ ժամանաւ կաւոր շնորհումն երկրի մը, որոյ վերայ զօրաց գնդերն կարենան հրահանգութիւններ ընել: Այնուշտ այս բանիս մէջ չար խորհուրդ մ'ունին: Անգղիացի դեսպանին ընդունած հեռագրին համեմատ, յայտնի է թէ Ճաբոնք յարաբերութիւն հաստատած են տեղացեաց հետ, և այս մեր կարծեաց վրայ կը հաստատուիմք, Հիւսիսային ու Հարաւային վաճառականութեան գլխաւորին տուած տեղեկութեանն, որ 'կը նկարագրէ մեզ իրաց վիճակը մի և նոյն կերպարանաւ: Եւ որովհետեւ այս գործն իրոյս միջնադգային ծանր խնդիրներ յարուցանել, անոր համար պէտք է շուտով դարման մատուցանել թշնամութեանց սկսելէն առաջ:

« Դատ կը զարմանանք թէ ինչպէս Լի-Հոն-Շիէին (ընդհանուր կառավարիչ Ֆու-Քեանի), անփոթե եղեր է այսպիսի ծանր եղելութիւն մը շուտով մեզի իմացնելու: Ֆորմոզայի երկիրը գրաւեալ 'ի տեղացեաց՝ մասն է չինական կայսերութեանն. ինչպէս

ուրեմն կրնար թողլ տրուիլ ձաբոնաց աչք ձգել անոր վրայ: Ուստի պէտք է իմացնել Հիմա միգի իրաց ստոյգ վիճակը, և 'ի ձեռն առնուլ այնպիսի նախազգուշութիւններ որ ամեն պատահարաց մէջ կարենան զօրել: Եւ որովհետեւ Լի-Հին-Նիկենի աւանդեալ պաշտօնը մեծ է, անոր համար չենք կրնար մէկէն զինքը յետս կոչել: Ուստի կը կարգեմք մէկ քանի պատերազմական նաւեր և զօրաց բանակ մը, որպէս զի երթան 'ի քննութիւն առնուն գործը, և այցելութիւն մ'ընեն բոլոր տեղացեաց բնակած կողմերը, ամենեկին թշնամութեան ցոյց չտալով ոչ 'ի խօսս և ոչ 'ի գործս ...:

Ոմանք անհրաժեշտ կ'ենթադրեն պատերազմը Սինու ու ձաբոնի մէջ, և յաղթութիւնը Սինաց կու տան իբրեւ աւելի բազմամարդ ու զօրաւոր: Բայց պէտք չէ մուսանք որ ձաբոնեցիին մեծ ոյժ ունի 'ի ծովու: Անոր համար Սինն ալ յայսմ մասին չուզելով քան զինքը ստորին մնալ, կ'ըմտածէ պատերազմական մեծ նաւ մը գնելու: Բայց ինչ օգուտ նաւէն եթէ պակասի նաւապետ, որով մէկէն կրնայ թշնամոյն ձեռքը ընկնալ: Անոր համար Սինն պատերազմը տեղի ունենայու ըլլայ, փոքրիկ ձաբոնը կրնայ յաղթել հսկայագոր Սինացոյն ծովական մարտիւ:

Սպանիա և Եւրոպա. — Վերջապէս սպանիական խնդիրը նոր կերպարան մ'առաւ մօտեքս. վասն զի երկու տարիէ 'ի վեր այդ վատաբախտ երկիրը զարկուրելի եղերանց նշաւակ եղած տարօրինակ ու անկերպարան վիճակի մը մէջ կը տատակէր: Օտար տէրութիւնք անդգայ դիտող միայն եղեր էին արիւնահնեղ և երկարատեւ քաղաքական գտնութեան, և ոչ ոք կ'ուզէր ճանչնալ պաշտօնապէս Սաւոյական տան թագազարմ իշխանին հրաժարմանէն ետքը ձեւացած հասարակապետական տէրութիւնը: Չարժեքին գանձը 'ի գութ ոչ ահարկութիւն խռովարարաց կարթագինէի և ոչ պաշարունմ Պիլաղոյի, ոչ խեղճութիւն ժողովրդոց և ոչ անգթութիւնք կարողութեանց. որոնք իրաւանց ու կրօնից պատրուակաւ՝ չթողուցին ոճիր որ չգործեն, որով պղծեցին թէ կրօնից և թէ թագաւորական իրաւանց արդարացի օգուտը:

Այսպէս թէպէտ տէրութիւնք անտարբեր ու անկարեկիր աչօք կը նայէին այս ամենայն աղէտից վրայ, սակայն ազատախօս Եւրոպայի համակրութիւնը Մատրիտի կառավարութեան կողմէն էր. որ թէպէտ անանուն և անգլուխ, բայց իր դանդաղու-

թեամբն ու անկարողութեամբն հանդերձ կը ներկայացնէր 'ի Սպանիա գակիրճ յառաջադիմական ու քաղաքական, ընդդէմ անողորմ չափազանցութեանց կարողութեան կուսակցութեան:

Կարողութեան պարագլուխը, անուշտ յաւամայս, մեծ ծառայութիւն մատուցին Սերանոյ մարաթստին կառավարութեան: Թէ որ հասարակապետական ու կարողութեան գնդերն շարունակէին տակաւին պատերազմել իրարու դէմ Պիսքալիոյ լեռանց մէջ, ինչպէս կ'ընէին մինչև Հիմա, Եւրոպա անտարակոյս տեղէն չէր շարժէր, այլ կը սպասէր որ այս կամ այն կողմն յաջողի վերջապէս զօրանալ քան զմիւսն, և հաստատուն տեւապետութեան ցոյց տայ, և այն ատեն պիտի ճանչնար նոյն կուսակցութիւնն իբրեւ կատարուած ու լրնցած գործ: Բայց ընդհակառակն կարողութեանք պատերազմի այնպիսի ոճ մը բռնեցին, որ այս օրուսն օրս թող տրուած չէ. վասն զի թէ և գտած չեն մարդիկ հնարք մը ջնջելու պատերազմը աշխարհիս երեսէն, սակայն ջանացած են գէթ զանազան զինուորական օրինոք նուազ արինահեղ բնել զայն ըստ կարելոյն, որով պատերազմը լրնենալէն ետքը, կը դադրի նաև 'ի պատերազմողսն վայրենի իրաւունքն սպանութեան: Իսկ ասոր հակառակ սկսան կարողութեանք անխնայ տասանորդել պատերազմի գերիները թէ որ չուզենային կարգաւ սրէ անցնել. կը սպաննէին դարձեալ կամ հրացանի կը բռնէին իրենց հակառակորդին հետ նաև անգէն օտարականը. կ'աւարէին ու կ'այրէին բոլոր տիրած տեղերէն. կը բռնէին խմորվին քաղաքացիներ և կը սպաննային դառն պատուհաս իրենց թշնամաց հետ յարաբերութիւն հաստատողաց դէմ: Եւ ահա այս ամենայն ոճրագործութիւնքն իմանալով քաղաքացիութեալ տէրութիւնք ու ժողովուրդք, վրանին տխուր տպաւորութիւն մ'ըրաւ, և ամեն կողմ համակրութիւն ունեցան հասարակապետական կառավարութեան վրայ:

Կարողութեանք մինչև Հիմա շատոնց ջախտուած էին անուշտ, թէ որ կողմնակից կուսակցութիւնք կրօնական կամ նիւթական շահագիտութեամբ չպաշտպանէին զիրենք ոչ միայն բանիւք՝ այլ և դրամով, զինուրդ և զինուորացի: Որինաւորական կուսակցութիւնն 'ի Վաղդիս մեծամեծ նպատակներ կը մատուցանէր կարողութեանց, անանկ որ Պիրենեան լեռանց սահմանակից գաւառք տեսակ մը համբարանոց դարձեր էին, ուսկից կ'ընդունէր կարողութեան ամեն իրեն պէտք եղածը, և ուր

կ'ապաւինէին վտանգի ատեն իրրեւ ամուր բերդաքաղաք մը: Վաղղիոյ տէրութիւնը կը տեսնար զայս ամենայն ու չտեսնալու կը զարնէր, կամ ծածուկ համակրութիւն ունենալու: առ կարողութեանս, կամ բան մ'ընել չկարենալուն:

Ծանր էր գործը և ծանրագոյն ևս իր հետեւանքները: Վասն զի յայտնի կ'երևար որ այս կերպով կրնար շարունակուիլ պատերազմը տակաւին երկար ատեն բազում արիւնհեղութեամբ: և ուրիշ կողմանէ միշտ տէրութիւնք ալ կրնային վստիսալ, որ ներքին խռովութեանց հեղեղն ուրիշ կողմեր ալ տարածուելով՝ ծանր հետեւանաց պատճառ ըլլայ:

Ուստի անհրաժեշտ կարեւոր տեսնուեցաւ տէրութեանց միջամտութիւնը, որով վերջ տալ այն կռուոյն՝ որուն ազդեցութիւնը իր սահմանն անցնելով սկսեւ էր ճարակիլ յընդհանուրս: Այլ ինչ կերպով սկսելու էր այդ մտածութեան գործադրութիւնը: Ուղղակի և նիւթական միջամտութիւն մը լի էր անստուգութեամբ ու մեծամեծ վտանգներով: Վասն զի կասկածանաց ու անվստահութեան առիթ կու տար զանազան տէրութեանց իրարու վրայ, և անտարակոյս անհաճոյ կ'ըլլար սպանիական կողմնակցութեանց այնպիսի ձեռնարկութիւն մը՝ ոսկից ետքը ձեռնթափ ըլլալն զժողովրդին էր: Գերմանական պետութիւնը, որուն ուրիշներէն աւելի անհաճոյ էր ըստ բազում զլխոց կարողութեանց զօրանալը, սկիզբն տուաւ միջամտութեան գործոյն, որով առանց նիւթական օգնութիւն մ'ընելու Մատրիտի կառավարութեան, առաջարկեց ճանչնալ զանիկա իւրը օրինաւոր տէրութիւն:

Սմեն տէրութիւնը բնդունեցան եղած առաջարկութիւնը, Գերմանիա, Մեզդիա, Իտալիա, Վազդիա, Աւստրիա բաց 'ի Ռուսիոյ, և ճանչցան մէկմէկու ետեւէ Մատրիտի կառավարութիւնը, որոց օրինակին հետեւեցան և փորբիկ տէրութիւնք: Այս բանն անտարակոյս մեծ բարոյական ազդեցութիւն պիտի ունենայ Սպանիոյ ներքին գործոց վրայ: Վասն զի ասով ազատական կողման ոյժը պիտի աւելնայ և հակառակ կողմանը պիտի տկարանայ, որուն արդէն պաշտօնապէս իմացուցին թէ զուրկ

է յետագայան համակրութենէ: Կը յուսացուի դարձեալ որ այս արտաքին տէրութեանց ճանաչումն ունենայ նաև 'ի նիւթականին իր օգտակար հետեւանքները: Վասն զի անգամ մը Մատրիտի կառավարութիւնը իրըւ տէրութիւն ճանչնալէն ետքը՝ ալ օրէն չէ 'իչ և է տէրութեան որ 'ի նպատտ ապստամբաց Սպանիոյ իր երկրին մէջ օգնութիւնք պատրաստուին ու կարգաւորուին: Այս բաներուն դէմ եթէ չուզենայ մէկն արգել զենը, ուրիշ բան ըսել չէ՝ բայց եթէ 'ի թշնամութեան ըլլալ Սպանիոյ հետ, զոր անուշտ ոչ մի տէրութիւն յանձն կ'առնու: Իւ ահա կը լսենք որ Վաղղիոյ կառավարութիւնը ձեռք զարկեր է իր հարաւակողման զաւառաց ու կարողութեանց մէջ եղած ման յարաբերութիւնները կտրել: և այսպէս եթէ ամենայն տէրութիւնք Վաղղիոյ պէս իրենց պարտքը կատարեն, յուսալի է որ կարողութեանք չգտնալով արտաքուստ օգնականութիւն, առանձնանան նորէն Պիսքալիոյ լեռանց մէջ, և լեռնային փոքրիկ յարձակումներ ընելով գոչ ըլլան: որոնք թէպէտ կրնան երկար տեւել, բայց ամենին ծանր ազդեցութիւն չեն ունենար՝ ինչպէս փորձը շատ անգամ ցուցած է, Սպանիոյ ընդհանուր գործոց վրայ: Որով Մատրիտի կառավարութիւնն ալ ազատելով կամ թեթեւալով այդ ծանր հոգոգութենէն, հաւանական է որ յաջողի ուլ զենը ներքին բարեկարգութեան և 'ի վեր հանել զՍպանիա անխիւսանութեան անդունդէն, յոր գահաւիժեցաւ միապետութեան անկումը:

Այս ամեն ըսածնիս, ինչպէս յայտնի է, հաւանական ակնկալութիւնք են. բայց այդ ալ բաւական միտթարութիւն մ'է: Երանի թէ այս վերջինն ըլլար այն գոգցեան անտեղիտալի ճակատագրական խռովութեանց, որ այնքան տարիներէ 'ի վեր ծանրացած է սպանիական ազգին վրայ, կործանելով բարոյապէս ու նիւթապէս այն երկիրը երբեմն բարգաւաճ ու յառաջադէմ իրաւ է թէ երկար տեւեց մինչև որ ամեն տէրութիւնք ճանչնան Մատրիտի կառավարութիւնը, բայց անգամ մը ճանչնալէն ետքը կը յուսանք որ ալ չթողուն 'ի Սպանիա այդ բարբարոսական արիւնհեղութիւնքը: